Յարգելի պրն.

Էդուարդ Բաղդասարեան,

Թեհրան:

---

Նկատի առնելով այն բարեբաստիկ երեւոյթը որ ,,Սարօ,, Գրատունը, 50-ն շարունակեալ տարիներ հրատարակչական օգտագործումը կազմակերպելու, օգտաշատ հիմնարկ է հանդիսացել: Հրատարակելով սպագիր արտադրանքներ եւ տարբեր ճաշակ ու մասնագիտութիւն ունեցող ընթերցողների մատակարարելով, նպաստ է հանդիսացել ընթերցողութեան մտաւոր մակարդակը բարձրացնելու գործում եւ որ գլխաւորն է, Գրատունում բերուած գրքերի ընթերցումով շեշտուել է հայ հայրենակիցների տեղեկութիւններն ու հայրենասիրական զգացմունքները:

Ուստի, մի խումբ գրասէրներ, տեղին համարեցինք հրապարակական հանդիսութեամբ նշելու Գրատան հանրօգուտ գործունէութեան 50-ամեայ Ոսկեայ Յոբելեանը:

,,Սարօ,, Գրատունն հիմնուել է, 1933 թւի Հոկտ. 9-ին, Թեհրանում ու ներկայում հանդիսացել է Իրանի ու Միջին Արեւելքի ամենահնագոյն Գրատուներից մէկը որ, պատիւ է բերում հայութեան, յատկապէս Իրանահայութեան:

Ընթացիկ տարւայ Հոկտ. 9-ին, լրանում է հիմնադրութեան Յիսունամեայ Ոսկեայ Տարեդարձը: Յոբելեանական հանդիսութեամբ գնահատենք հիմնողի ու Տնօրէնի գործը ու արժէքաւորենք Գրատան Գոյութիւնը:

Այսու գրութեամբ, Ձեզ հրաւիրում ենք անդամակցելու կազմուելիք Յոբելեանական Յանձնաժողովին, որի անդրանիկ նիստը կայանալու է, ուրբաթ, 15 Ապրիլ, 1983, կէսօրից յետոյ ժամը 4-ին, պրն. Սարօ Յովսէփեանի բնակարանում,- Թալղանի պողոտայ- Նախկին Թախտը Ջամշիդ-ռառուզի Բհարի ու Աէրաճ Թալղանի միջեւ ընկած Ախթար փողոց, թիւ 46, 2-րդ յարկ. Հեռախօս 750206:

Խնդրում ենք բարեհաճել Ձեր համաձայնութիւնը յայտնելու գրաւոր կամ բանաւոր , ,,Սարօ,, Գրատունը, ամենաուշը մինչեւ 10 Ապրիլ, 1983, Հեռախօս 676853-ով:

Կանխայայտ շնորհակալութեամբ

Ի դիմաց մի խումբ Գրասէրների

Ժորժ Խասանեան.

Թեհրան, 15 Մարտ, 1983.